ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 377-Ա

« 26 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024Թ

« ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԹԱՌԱԹՈՒՄԲԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԶՈՀՐԱԲ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ մասի 5-րդ, 17-րդ, 22-րդ կետերի և 21–րդ մասի, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 48-րդ կետի 10-րդ, 12-րդ, 17-րդ, 21-րդ ենթակետերը, մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2024 թվականի նոյեմբերի 1-ին «ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կատարված աշխատանքային այցի մասին զեկուցագիրը և անհիմն համարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 01/15/7189-2024 գրության հիման վրա Զ. Խաչատրյանի 2024 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 20 գրավոր բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն չիրականացնելու, կրթական գործընթացը ճիշտ չկազմակերպելու, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի, 142-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 11.8.2005 թվականի թիվ 1223-Ն որոշման պահանջների խախտման և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11 և 13–րդ հոդվածների պահանջների խախտմամբ իրավական ակտ ընդունելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Զոհրաբ Խաչատրյանին

ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զ. Խաչատրյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր